# ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ
# ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ՝ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՓՈԽՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը (այսուհետ՝ ՀԿԽԸ) և Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությունը (այսուհետ՝ ՀՀ ՆԳՆ)՝ (այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով արտակարգ իրավիճակների ոլորտում միասնական առաքելությունը և խնդիրները, գործող օրենսդրական հիմքերը, նպատակ ունենալով ապահովել արդյունավետ և օպերատիվ միասնական արձագանքման հնարավորությունը աղետների դեպքում, ելնելով աղետների ռիսկերի նվազեցման և կանխման ոլորտում արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանությանն առնչվող հարցերում համագործակցության մեխանիզմներ սահմանելու անհրաժեշտությունից, ինչպես նաև աղետներին պատրաստվածության, արձագանքման, ռիսկի նվազեցման և կանխման, այդ թվում՝ կլիմայի փոփոխության հետևանքների մեղմացման, աղետների հետևանքների վերացման ուղղությամբ արդյունավետ համագործակցության միջոցով համայնքների կայուն զարգացում ապահովելու խնդրից, կնքեցին սույն Փոխըմբռնման հուշագիրը հետևյալի մասին.

**Կողմերը պայմանավորվում են.**

1. սերտ համագործակցել աղետների ռիսկի նվազեցմանն ուղղված աշխատանքներում,

2. Կողմերի աշխատանքային ծրագրերում ներառված գործողությունների իրականացման նպատակով համատեղել ջանքերը և երկուստեք ընդգրկել միմյանց կառույցներում առկա ուժերը,

3. կիսվել համապատասխան տեղեկությամբ՝ արտակարգ իրավիճակներում արձագանքի համար անհրաժեշտ առկա ռեսուրսների և միջոցների վերաբերյալ՝ պատրաստվածության ապահովման նպատակով,

4. սերտ համագործակցել աղետների հակազդման, պատրաստվածության, ռիսկի նվազեցման և կանխման ուղղություններով՝ բնակչության և համայնքների աղետների նկատմամբ խոցելիությունը նվազեցնելու նպատակով,

5. սերտ համագործակցել արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանությանն առնչվող հարցերում՝ կամավորական ուժի ներգրավման և լայնածավալ իրազեկման միջոցառումներ իրականացնելու միջոցով,

6. համագործակցել կլիմայի փոփոխության հետևանքների մեղմացման ուղղությամբ՝ աղետների, արտակարգ իրավիճակների և տնտեսական ճգնաժամերի կանխարգելման նպատակով,

7. «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» և «Փրկարար ուժերի և փրկարարի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքների հիման վրա պետական լիազոր մարմնի կողմից աղետների հետևանքների վերացման աշխատանքներում ընդգրկել ՀԿԽԸ արձագանքման համակարգում առկա ուժերը,

8. համագործակցել իրավիճակի մասին զեկույցների պատրաստման նպատակով անհրաժեշտ տեղեկատվություն հավաքագրելու և վերլուծելու գործում, ներառյալ՝ տուժած բնակչության թվի, գտնվելու վայրի և այլ տեղեկությունների մասով՝ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի շրջանակներում,

9. համագործակցել բնակչության շրջանում ուսումնական դասընթացների, վարժանքների, տարհանման փորձերի կազմակերպման/իրականացման, ուսումնական նյութերի մշակման և տպագրման հարցում՝ աղետներին պատրաստվածության և հանրային իրազեկման ապահովման նպատակով,

10. համագործակցել բնակչության տեղաշարժերի, կանոնավոր և անկանոն միգրացիայի կառավարման և պատրաստվածության ոլորտներում, հատուկ կարիքներ և խոցելիություն ունեցող խմբերի և անհատների բացահայտման հարցերում, մասնագետների կարողությունների զարգացման պլանավորման և իրականացման ընթացքում,

11. սերտ համագործակցել արտակարգ իրավիճակներում «Որոնում» ծառայության ընտանեկան կապերի վերամիավորման (ԸԿՎ) հարցերում:

**Սույն Փոխըմբռնման հուշագրի շրջանակներում համագործակցությունն իրականացնելիս ՀԿԽԸ-ն կարող է.**

1. մշակել և իրականացնել ծրագրեր աղետների ռիսկի կառավարման ուղղությամբ՝ համայնքային և մարզային մակարդակներում բնակչության կայուն զարգացման գործընթացին աջակցելու նպատակով,

2. մշակել և իրականացնել ծրագրեր՝ հանրային իրազեկման և բնակչության պատրաստվածության բարձրացման նպատակով,

3. աղետի դեպքում մոբիլիզացնել ՀԿԽԸ արձագանքման ուժերը, ապահովել կամավոր փրկարարների և առաջին օգնություն իրականացնողների ներգրավումը արձագանքման գործողություններում, իրականացնել իրավիճակի և կարիքների գնահատում և անհրաժեշտության դեպքում ՆԳՆ-ին տրամադրել գնահատման արդյունքները,

4. Մոբիլիզացնել ռեսուրսներ՝ արտակարգ իրավիճակներում տուժածներին ԿԽ/ԿՄ միջազգային շարժման չափանիշներին համապատասխանող մարդասիրական օգնություն տրամադրելու համար,

5. Իրականացնել առաջին օգնության կրթական ծրագրեր՝ քաղաքացիական պաշտպանության ոլորտում աշխատանքներ իրականացնող կազմակերպությունների/անձանց, սահմանամերձ մարզերի հրշեջ-փրկարարական անձնակազմերի համար, ինչպես նաև բարձրացնել նրանց իրազեկվածությունը՝ արտակարգ իրավիճակներում ականների հետ վարվելակարգի կանոնների վերաբերյալ,

6. «Որոնում» ծառայության շրջանակներում օգտագործել ՀԿԽԸ կարողությունները՝ տուժածների վերաբերյալ տեղեկատվություն հավաքագրելու, մշակելու և նշված տեղեկատվությունը տուժածների ընտանիքներին տրամադրելու հարցում՝ հիմք ընդունելով «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքը:

**Սույն Փոխըմբռնման հուշագրի շրջանակներում համագործակցությունն իրականացնելիս ՀՀ ՆԳՆ-ն կարող է.**

1. աղետներին արձագանքման ռազմավարական փաստաթղթերում ներառել ՀԿԽԸ հետ համագործակցելու հնարավորությունը,

2. ոլորտային օրենքների, ենթաօրենսդրական ակտերի և այլ նորմատիվ իրավական ակտերի մշակման գործընթացում ներգրավել ՀԿԽԸ ներկայացուցիչներին,

3. աղետներին արձագանքման գործողությունների ժամանակ ՀԿԽԸ արձագանքման ուժերի ներգրավման դեպքում համակարգել վերջիններիս աշխատանքները, անհրաժեշտության դեպքում՝ տրամադրել անհրաժեշտ տեխնիկական միջոցներ,

4. համատեղ ծրագրերի մշակման և իրականացման գործընթացում ներգրավել իր ենթակայության տակ գտնվող համապատասխան կառույցներին՝ ներառյալ ոլորտին վերաբերող համապատասխան տեղեկատվության, մարդկային և տեխնիկական անհրաժեշտ ռեսուրսների, ինչպես նաև մասնագիտական խորհրդատվության տրամադրումը,

5. արտակարգ իրավիճակների բնագավառում ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված իրավասությունների շրջանակներում ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցելիս աջակցել ՀԿԽԸ կողմից ոլորտում իրականացվող միջոցառումներին, ինչպես նաև ՀԿԽԸ և նշված մարմինների միջև համագործակցության իրականացմանը,

6. «Որոնում» ծառայության գործունեության համար ՀԿԽԸ-ին տրամադրել համապատասխան տեղեկատվություն, համագործակցել և օգտագործել ՀԿԽԸ-ի վերոնշյալ ծառայությունը՝ աղետների հետևանքով տուժածների ընտանեկան կապերը վերամիավորելու նպատակով:

**Ամփոփիչ դրույթներ.**

1. Սույն Փոխըմբռնման հուշագրի շրջանակներում կազմակերպվելիք առանձին միջոցառումների պայմանները կհստակեցվեն կողմերի միջև ստորագրվելիք լրացուցիչ համաձայնագրերով/փաստաթղթերով:

2. Սույն Փոխըմբռնման հուշագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է 5 տարի ժամկետով:

3. Կողմերի համաձայնության դեպքում այն կարող է երկարաձգվել առանձին կնքված լրացուցիչ արձանագրությամբ:

4. Կողմերից յուրաքանչյուրը կարող է ցանկացած ժամանակ դադարեցնել սույն Փոխըմբռնման հուշագրի գործողությունը՝ այդ մասին առնվազն 3 ամիս առաջ գրավոր տեղեկացնելով մյուս Կողմին:

5. Սույն Փոխըմբռնման հուշագրից ծագած տարաձայնությունները Կողմերը լուծում են բանակցությունների միջոցով:

6. Սույն Փոխըմբռնման հուշագիրը ստորագրված է ք.Երևանում 2024թ. հունվարի 18-ին:

Հայկական Կարմիր խաչի ընկերություն
Գործադիր տնօրեն
Աննա Եղիազարյան

ՀՀ ներքին գործերի նախարարություն
Նախարար
Վահե Ղազարյան